ուշունաց և յընտեսութեան էլլուսունաց:

Ապավաղուկի սկիզբն արտեալ պատշաճ ա-  
սենալուսութե առ զօրապետու, և արծործեալ  
՚ի նման զաներկեանութիւն և զարութիւնդ յէմ  
զերահաս վատնդաց, դիմաց ՚ի վերց բարբա-  
րուց զօրք հանդերձ. ոյնու կարդաւ, զի յա-  
սաջց հետեակ զօրաց ունէր ՚ի հեծելց զքա-  
նի գուշնդ. Յաջ թեան եղեալ էին ոյնո-  
ւիկ զօրք՝ որոց Աղետու ռասջնորդէր. զհեա-  
սրոց երթոցին սիրելի զօրքն՝ յորոց զլիսուսը  
եր Փելվա որդի Պարմենիովնի. Յեա նոցա-  
ոցիւ եօթն կըրդ հեծելց կոցին ընդ նորին  
կառավարութիւն. Օկնի նոցու եր հետեակ գուշնդ  
ինչ Արգիքասպիդոց՝ որ ու միացն զինու, ոյն  
և քաջութիւն գերազանցէր քան զամենեսին. յա-  
րոց վերց եր կարգեալ զօրավար ՚Նիկանովը որ-  
դի Պարմենիովնի. և օդնական ոցաւ եւ զզօրուն  
անուանեալ ՚Ելիմելվակիդոց ՚ ընդ ռասջնոր-  
դութեամբ Ալիսոսի:

Ապագաւ առ նոսս գատնեին զօրք Ովեա-  
սեանց և ՚ ինկեատեանց ընդ զօրավարին իւր-  
եանց Պերգեկիդոց. Օհեա ոցաւ երթոցը  
ԱՌ

Մելէադր հանգերձ զօրօք իւրավք և յետ նորա  
Պաղիսպերխոնդ առաջնորդ Ասիմիկաց ։ Ի հար-  
դի անդ կայր Փիլիպպոս որդի Աւազերոց և յետ  
նորա Արտահերոս ։ Օթիւ հեծելոց զօրոց տա-  
ցաք ։ Ընցը առաքեալն օդնութիւ յ՛Արոցից և ՚ի  
Պեղոպոնէսոսէ հեծելոզօրն ՚ի միասին ընդ Փիլ-  
առացւոց ։ Մալքանացւոց և Փոկէ-  
ացւոց որոց առաջնորդէքը Երեշիս Միտիլենացի-  
Ահրջապէս Յժետաղացիք ընդ ձեռամբը Փիլիու-  
պեց կացին որք քաջութիւն և արագութիւն յըն-  
թացու և կարգաւորեալ գնդովք դերազանցէին  
յոյժ քան զայլս ։ Մերձ առ նոստ կարգեց զա-  
զեղաւորս ՚ի Արեաց և յ՛Արոցից զ՚ի վարձու-  
կալեալս ։ յերկուս թես զօրաց և եղ զօրս  
թիրուցան կարգեալ ։ զի մի Պարսիկք բազմութիւ-  
նացւոց զակաւ զօրս ։ Աակեղոնացւոց պաշա-  
ցեցին ։

Օյարձակումն պերանգազէն կառաց նա-  
խապաշարեաց արքացն այսու եղանակաւ հրամաց-  
եաց հետեւակացն զնդոց զի յորժամ մերձեսցին  
կասքն ։ Հարցեն տիկօք իւրեանց զվահանս կար-  
գաւ միաւորեալս ։ զի ՚ի թնդմանէ անտի շրառ-  
ցեալ գարձցին յետու կառաձիկ երիվարք ։ Վաղ-  
եթէ և այնու ոչ արգելցին ։ աեզի տուեալ ՚ի  
վայրացն ։ տացեն նոցա անցու ։ ընդ որս առանց  
ինչ վնասու ։ Աակեղոնացւոց վազս առցեն առա-  
և անդ ։ Խճքն յանձն էաւ վարել զաջ թեն ։ և  
զգունդն եղեալ փոքր մի թիւը ։ հաստատեց

զի՞նքն լինել անգ՝ ուր գիպեսցի վասնդ ինչ։  
 'Իսրեհ ըստ զանազանութեալ ազգաց կար  
 դեալ զզօրս իւր, և ինքն առաջնորդեալ թե ոյն  
 որ էր հանդէպ Աղեքսանդրու, խաղացր ընդդէմ  
 թշնամեաց։ Եւ իբրև ճակատեցան մօտ առ մի  
 մանս դէմ յանդիման, և առւաւ նշան մարտի  
 փողովք, յայնժամ զօրք աղաղակ մէծ բարձեալ  
 մերձեցան առ միմեանս։ և վաղվաղակի գերան  
 դազէն կառք մեծաւ զօրութէ վարեալք՝ ահ մեծ  
 արկին՝ ի վերաց Վակեգոնացւոց։ և Վազես զօ  
 քավար հեծելոց անմիջաբար զհեա կառացն յար  
 ճակեալ առաւել սաբսափելի արար զայն յարձա  
 լումն։

Ծայնմ միջոցի յառաջապահ գունդն ըստ  
 հրամանի Աղեքսանդրու՝ ի միաւորեալ ասպարան  
 հարեալ զտէդս իւրեանց, հային զըստումն սաս  
 տիկ։ և իբրև երիվալքն շըտեան, բազումք՝ ի կա  
 ռացն դարձան յետս։ և քանզի զնոսա ուժինչ ի  
 ւկը զօրութէ արգելուլ լինէր հնար, նմին իրէ  
 յետս ընդ կրունկն դամեացին։ իսկ այլք յարձա  
 կէին՝ ի գունդմն։ Այլ իբրև Վակեգոնացիք աե  
 զի տուեալ բացին նոյա անցս բաւական առ ըն  
 թացս, վազեալ նոյա ընդ այնոսիկ միջոցսն՝ ո  
 յանք՝ ի բազում նետաձգութեց աստի և անտի  
 խորտակեալ փշրեցան։ և սմանք անցեալ գնացին։  
 Իսազումք ևս բռնութէ մեծաւ ձգեալ՝ զհանդի  
 պակացսն գերանդեօք կալեալ՝ դանթիւսն՝ ի նո  
 յանք զանազան եղանակաւ կոտորեին։ Վանզի

ոյնքան սրածոցը և պինդ էին շինեալ՝ ի կորուսու  
այնորիկ գլուխիք, զի զբազմաց ձեռու վահանօք  
հսնդերձ խլէին. Օքազմաց ևս կալեալ զպարտ  
նոցս՝ այնալիսի զօրութիւն հարկանէին, զի զգլուխու  
բաց աչքը՝ առանց բառնալց զկենդանութին՝ ար-  
կանէին յերկիր. Օսմանց զկողս բարձրալ՝ ան-  
դէն առ նմին կորզէին զոգիս:

Այսլ իբրև զօրքն խռնեցան, և նետք նոցա  
սպառեցան, սկսան այնուհետեւ մարանչիլ սրով։  
Ասսն որոյ և նախ մարան բոշուոքեցաւ՝ ի մէջ  
հեծելոց. և Մակեդոնացիք զօրանացին յաջթեն.  
իսկ Դարեհ գոլով յահեակն՝ պաշտպանիւր՝ ի  
հեծելոց, որք իւրին էին. Սոքա էին թռւովհա-  
ղար. որք զմի գունդ կացուցանէին. առ քաջուե-  
և սիրոյ իւրեանց՝ որ առ արքացն՝ նետահզութեց  
հակառակ զնէին զանձինս, ունելով զարքացն ա-  
կանատես վիայ քաջութե՛ և ջերմեռանդութեան  
իւրեանց, Ընդ նոսա՝ ի միասին կացին և Միլ-  
փորայք արք քաջք, որոց թիւ բազում էր յոց.  
յւ որս էին և Մարթիք և Ալիսսէիք. որք յաղթ-  
անդամութիւն իւրեանց և անվլէհերութիւն զամնե-  
սին՝ ի զարմանս կրթէին. Առ սոքոյ էին և  
չիւրեթին և Ոփելեթին, և հզօր զօրքն Հնդ-  
կաց. Սոքա ամեներին մեծաւ ազաղակաւ անկեալ  
՚ի վերայ թշնամեաց՝ անհնարին քաջութիւն մաքան-  
չէին, և բազմութիւն իւրեանց նեղէին զՄակե-  
դոնացիս:

՚Ի վերայ ապոք ամի Մազես պաշտպանեալ

զաջ թեն՝ հզօր հեծելովք յառաջին յարձակման  
անդ զբազւմն 'ի թշնամեաց եհար չարաչար ։ Առ  
պա հըամսցեալ երկուհազար Ապառւսեաց և հա  
զար ընտիր հեծելոց Ակիւթացւոց՝ պատեալ ըզ  
թեռով թշնամեաց՝ յարձակիլ 'ի վերաց աղխին և  
տիրել ծանըութեց նորա, նորս յօժարութիւն  
կատարեցին զհըամանն, և յարձակեալ 'ի բանակ  
Վակեղոնացւոց՝ ( յորում ժամանակի և ոմնաք  
'ի գերեաց զէն առեալ՝ օգնեցին նոցա, ) յափշ  
տակեցին զաղին : Ուստի՝ յայս անակնիալ դիպ-  
ուածոց յարեաւ յոզջոյն բանակին աղաղոկ և  
շփոթ մեծ . յորում միջոցի ոմանք 'ի կանաց գե-  
րեաց անկան առ բարբարոսս : Այլ մայրն 'Իս-  
րեհի Ախսիդամբըրա՝ յորդորեալ յայլոց՝ ոչ հաճե-  
ցաւ փախչիլ, և ոչ շարժեցաւ 'ի տեղութէ իսկ,  
ոչ յուսացեալ 'ի կեղակարծ պատահ մուռս բաղ-  
դին . և ոչ կամեցեալ զծագ դոչութե իւրոց որ  
առ Վղեքսանդր լքանիլ :

Իսրբարոսք զմեծ մասն ծանրութեց յափշտա  
կեալ՝ ուրախական աւետեօք դարձան առ Վա-  
զես : Այնպէս յաջողութիւն և մասն հեծելոց՝ ոք  
կայց առ 'Իսրեհի, զՎակեղոնացին՝ ոքք կային  
հակառակ իւրեանց, բազմութիւն իւրեանց տկա-  
բացուցեալ՝ բռնադատեցին 'ի փախուստ :

Յայնմ ժամանակի եթիրորդ յոջողութեան  
Պարսից՝ Վղեքսանդր միոյն կամնլով փութապէս  
ածել 'ի կարդ զիւրտակեալ գունդն իւր, արքե-  
նի ոպըուժիովք և ոյլովք համբատիր զօքականօք

անկուր ՚ի վերսց Դարեհ հի : Խոկ Առքոյն Պար  
սից ելեալ ընդդէմ թշնամւոյն՝ որ արիարար շա-  
հատակեր ՚ի վերսց իւր, ՚ի կառաց անսի մարտն-  
չեր . և զատարափ զինուցն՝ յարձակելոց ՚ի վերսց  
իւր՝ վանէր, նաև դի և բազում արք պաշտպանէին  
նմա : Ծայնմ միջոցի Աղեքսանդր արձակեալ ՚ի  
Դարեհ զատէգն՝ ոչ կարաց հարկանել զնա : ոյլ  
զկառավարն որ էր առ նմա վիրաւորեաց ՚ի մահ :

Եւ իրեւ Թիկնապահքն արբացի առաջակ  
բարձին , զօրքն՝ որ ՚ի հեռասրամէ կացին , հա-  
մարեցնին՝ թէ սպանաւ ալքոցն : Եւ յորժամփա-  
խեան առաջինքն՝ չոքսն զհետ նոցա և այլք . և  
զօրքն իսկ՝ որ կացին առ Դարեհի , սկսան խռոն  
՚ի խուռան փախչիլ . Եւ վերջապէս իրեւ ՚ի մի-  
ում կողման ոչես մնացին զօրտվիգն , երկուցեալ  
անտի Արքայն՝ դարձաւ ՚ի փախուստ : Այսու  
եղանակաւ ՚ի փախչիլն Պարսից թանձրուի փոշ-  
ւոյն զիգեալ ամբառնայր ՚ի ներքուստ սմբակաց  
երիվարացն հեծելոց : Ուստի Աղեքսանդր պընդ-  
եալ զհետ թշնամեաց իւրովք հանդերձ , ՚ի պատ-  
ճառա անչափ թանձրու թեան փոշւոյ՝ ոչ կարաց  
աեսանել , թէ ո՞ւր փախեաւ Դարեհ : Միոյն  
հեծեծանք անկելոցն , և դոփիւն սմբակաց երի-  
վարաց , և անդադար ձայն մտրակաց՝ որով հաբ-  
կանէին զերիվարսն՝ լինէին լսելի :

Ծայնմ միջոցի Վազես՝ որ կայր յաջ թէն  
իւրովք հզօր հեծելովք զզօրս թշնամեաց զեդ-  
եալն ընդդէմ իւր՝ նազէր սասակապէս : Այսն  
որոք

սրոյ և թէպէտ Պարմնիովն հեծելովքն թռեաւ  
դաշուց և սյլովք հանդերձ՝ ի մեծ վտանգի կացը,  
սակայն առ ժամանակ ինչ կացը հակառակ թշնա-  
մեաց . և նախ արիաբար պատերազմեալ՝ քաջութէ-  
թռեաւաղացւոց պարասասեցուցանէր զնոսա . այլ  
յորժամ՝ զօքը Վազեեաց անթիւ բաղմութէ և  
զօրութէ մեծաւ՝ սոստիսպէս յարձակեցան . յայն  
ժամ՝ տիտրացան թերն Վակեգոնացւոց , վասն  
որոյ և արիւնհեղութիւն մեծ լինէր անդէն . և  
իսլ հակառակ զօքութեան բարբարոսաց լինէր ան  
հնարին .

**Ա**ստի սյնուրիկ Պարմնիովն առաքեալ հե-  
ծեալս առ Վայեքսանդը՝ խնդրեաց՝ զի հասցէ նմա-  
սպնութի՝ վաղվազակի՝ որքան իցէ հնար . Դաս-  
պահըն անհնարին արտգութէ զհըամանն կատա-  
րեցինք այլ լուեալ՝ թէ Վայեքսանդը զմեծ մասն  
զօրաց հատեալ է , դարձան յետո՝ ոչինչ վճար-  
եալ . Պարմնիովն ՚ի կիր արկեալ զամ քաջութէ-  
և ոչ հնարս ՚ի կարդել զհեծելազօր թռեաղաց-  
ւոց , հազիւ վերջապէս զբորբարոսա՝ ուք ՚ի փա-  
խստենէ Պարեհի անկան յերկիւղ մեծ , մարթա-  
ցու բռնադատել ՚ի փախուստ . Յայնմ միջոցի  
՚ի արեհ՝ դոլով կարի վարժ ՚ի կառավարութեան՝  
զգնութէ թանձրութե փաշուցն ոչ յետո , որուէս ո-  
պլ բարբարոսք , այլ ՚ի հակառակ կռջմն փա-  
խեաւ . և սյնու եղանակաւ վրկեցաւ . և զամե-  
նեսին՝ որք ընդ նմա փախուչ ին՝ էած անվնաս ՚ի  
պիւղօքէս՝ որ էին զհետ Վակեգոնացւոց . Ակր-

շապէս՝ իբրեւ համայն քարբարոսք աճապարեցին  
 'ի վախուստ և Ա' ակեղոնացիք զհետ պնդեալ  
 նոցա՝ զյետինան զամենեսին կոտորէին, 'ի գոզզն  
 միջոցի ոցն ամ՝ գաշտավացըք ծածկեցան զիովք.  
 Առեւաւ յոցսմ մարտի 'ի քարբարոսաց աւելիքան  
 զինսառն հազար այր 'ի հեծելոց և 'ի հետեա-  
 կաց. Իսկ 'ի Ա' ակեղոնացւոց կոտորեցան արք  
 հինգհարիւը, բայց վիրաւորք էին բազում յոցժ,  
 յորս էին և ընտիր զօրավարք, Խփեստիովն զօ-  
 քապետ առքունիք վաշտից տիգաւ թափանցանց չ  
 ուսն վիրաւորեալ էր, նոյնպէս Պիրղիկաս, Ակ-  
 նոս, Ա' ինիգէս և ոյլք ոմանք խոցեալ էին. Յոցա  
 միկ պատերազմի անկան և 'ի զօրաց Հայոց բա-  
 զումք յոցժ, և մեացեալքն ցիրուցան և զեալ՝ դար-  
 ձան 'ի Հայոց:

Ա' ահէ թագաւոր Հայոց այր հզօր՝ իբրեւ  
 լուաւ՝ թէ զօրք իւր կոտորեցան չ զօրաց 'Իս-  
 րեհի, եղ 'ի միտս իւր անձամք ելանել 'ի պա-  
 տերազմ, և առնուլ զվոէժ յԱղեքսանդրէ. Ա' ասն  
 որց գումարեու զօր բազում յոցժ 'ի Հոնաց,  
 յԱլանաց, յԱղուանից, 'ի Արաց և 'ի Լեռանցն  
 Կովկասեանց և Ասրդուաց, և առեալ ընդ իւր  
 զյաղթական զօրս Հայոց մեծաց՝ զիմեաց 'ի վի-  
 րաց յԱղեքսանդրի:

Իբրեւ զգիմի հարան միմեանց Ա' սկեղոնացիք  
 և Հայք զորնեցին բազում արեան Ճապաղիս,  
 մինչև Եղեքսանդր սկսաւ կառկածիլ վասն վախ-  
 ճանիք մարտին. Աակայն վերջանկս չ երկարեւ իւրաց  
 Ա-

Աւհեք վէրս ընկալեալ 'ի ճեռանէ Վղեքսանդրէ  
մոռաւ . և զօրք ձայոց և նախարարք դարձան  
յաշխարհս իւրեանց . Վղեքսանդր արար զ ձայաս-  
տան՝ նախարարութիւն Վակեղոնացւոց , և առա-  
քեաց անդը զ Միհրան կուսակալ . սրում ապա յա-  
ջորդեաց Աւապտղոմէոս , զոր վանեաց Վրդուարդ  
իշխան ձայոց . և սպագէս ձայաստան ընդէր-  
կար թաց լը լծով Վակեղոնացւոց և Որուիիաց-  
ւոց , մինչև 'ի ծագութ Բրշակունեց Պարթեաց :

### ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՒԴԻ :

Յարդիկ Աւապտղոմէոս ընդ Լուստեհանց-  
ոց և յազնութիւն և առան Աւապտղուց և Ըօշա և  
Պիշտութեաց և բակուն Պարդէի :

Ասրանոր շվեմթք Յունաստանի նուածին յ Անտիպատրեաց  
Սահով զօրավար 'ի Թրակիա վարանցէ : Լակեդեմո-  
նացւոց պատերազմ ընդ Անտիպատրեայ և զիւց-զնական  
մահ Ագիդեայ . Աղեքսանդր տայ դուլ զօրաց . և ար-  
արեալ կարգ , զօրագողով լինի և դիմէ 'ի մարտ . Ար-  
կարդագրութիւն 'ի զօրս Մակեդոնացւոց . Ըօշ անձնա-  
տուր լինի Աղեքսանդրու . Գանձ պահեալ 'ի Ըօշ . Սե-  
զան Դարեհնի 'ի զորց զնի 'ի աեղի աթոռոց . Աղեք-  
սանդրու ուղեգնացութիւն ընդդէմ Նարսեաց , և ըն-  
թացք զետայն Տիգրիսայ . Ցաղթուի և առունե Արքսեաց  
Դժուարութիւն յանցմն ընդ ապառաժան Ըօշա . Աղեք-  
սանդրու որ երիտայ 'ի Պերսեպոլիս 'ի հանոպարհին հան  
զիպին տուայտեալ Յոյնք . որոց ցուցանէ մարդտուիրութիւն  
մեծ . Պերսեպոլիս կողպատի . Գանձք Պերսեպոլեայ .  
Մեծաշուք վայելլութիւն ապարանից Պերսեպոլեայ . Ամ-  
րոց Պերսեպոլիսայ այրի ընդ կատակս . Աղեքսանդրու  
հակառ ընդդէմ Դարեհնի . և մահ Դարեհնի . Խորհութէ  
'ի Կոլութառ յազագո խոռվայոյզ Յունաց :

**Ա**րքե ատրածեցաւ 'ի Յունաստան լուր  
պատերազմին Արքելայ, 'ի 364 ամիս  
բազում քաղաքք՝ որոց կասկածելի էր աճիլն  
Մակեդոնական կարողութեան և զօրութեան, եղին  
պառաջին աշխատութեն իւրեանց պահպանել, մինչ  
առկաւին Պարսիկք ունին զօրութենինչ. Քան  
զի կարծէին՝ թէ 'Դարեհ արասցէ նոցա օգնութ  
առաքելով դրամն 'ի վարձել յօտաք ազգաց զօր  
մեծ. և Աղեքսանդր ո՛չ կարասցէ անջատել զզու  
թե իւրի Ապա եթէ թողցեն նմա նուտաճել  
զՊարսիկս. այնուհետեւ ո՛չ ևս ունելով ուս  
տեք օգնութեն՝ ո՛չ կարասցեն կալ վասն ազա-  
տութեան իւրեանց :

Հարժեաց զնոսա 'ի վտարանջութեն ապս  
տայրութեն որ եղե 'ի Յօրակիա ո՛չ բազում  
ժամանակաւ յառաջքան զայն: Քանզի Մեմ  
նովն զօրավար ունելով առ ինքեան զօր բազում  
և համարձակութեն ո՛չ սակաւ, խսովեալ զբար-  
բարսս դրժեաց Աղեքսանդրու. և յանկուցեալ  
յինքն զբազմութեն զօրաց՝ մլսեցաւ այնուհետեւ  
'ի յայտնի պատերազմ: Յազագս որոց Անտիկատ  
ըսու ժաղովեալ ամ ուստեք զօրս, և 'ի Մակեդոնից  
խաղացեալ 'ի Յօրակիա՝ յարոյց պատերազմ ընդ  
դէմ Մեմիալիսի: Եւ մինչ Անտիկատըսս 'ի նոյն  
պատազէր ' Լակեդեմոնացիք ժամ դիպուկ հա-  
մարեալ պատրաստիլ 'ի մարտ՝ խրախուսեցին  
ԱՅնս մտեալ 'ի միաբանութեն զինիլ վն ազատուե:

Յայսմ ժամանակի Աթենացիք ընկալեու  
Ազեքսանդրէ զպատիւ առաւելքան զայլ Յոյն  
մեացին անդորր 'ի պաշտօնի իւրեանց . Իսկ 'ի  
Պեղոպոնէսացւոց բաղումք և այլք ոմանք համա-  
ձայնեալ ընդ միմեանս՝ միսեցան յայս պատերազմ .  
և ացսպէս ըստ զօրութե իւրաքանչիւր քաղաքի  
զօրաժողով արաբեալ ընտիր երիտասարդաց՝ գու-  
մարեցին աշխնչ պակաս քան զքսան հազար հե-  
տետկս , և երկու հազար այրու ձիս :

Վրարեալ Լակերգեմանացւոց զայմ պատրաս-  
տութե պատերազմին՝ յուղի անկան ընդ զլեաւոր  
առաջնորդութե Յղիդաց՝ համակ զօրութե իւր-  
եանց . Անտիպատրոս լուեալ զգումարմանէ Յու-  
նաց՝ հաստատեաց զդաշն 'ի Յնըակիա 'ի կարե-  
լի պայմանս . և համացն զօրոք հանդերձ փու-  
թացաւ 'ի Յունաստան . ուրանօր 'ի Յունացն  
դաշնակցաց ընկալաւ զօրս նպաստաւորս ո՛չինչ  
ընդ համ քան զքսաւասուն հազար արս :

Իրեւ բորբոքեցաւ մարտն՝ Աղիդէս արքաց  
քաջութե մարտուցեալ զբկեցաւ 'ի կենաց . Լա-  
կերգեմանացիք ընդերկար զդէմ կալեալ , վերջա-  
պէս իրեւ դաշնադիրքն նոցա բռնադատեցան տե-  
ղե տալ , չուեցին և ինքեանք 'ի Սպարտա .  
Յայսմիկ մարտի 'ի Լակերգեմանացւոց և 'ի պաց  
մանակցաց նոցա կորեան իրեւ հինդ հազար և  
երեք հարիւր արք . Իսկ 'ի զօրացն Անտիպատ-  
րոսի կոտորեցան արք իրեւ երեք հազար հինդ  
հարիւր . 'ի մահուան Աղիդաց պատահեցաւ ինչ

զարմոնալիք. քանզի նու քաջութեալ պատերազմակատացաւ վէրս բազումս, վասն որոյ և զօրքն առ նէին զնա: 'ի հայրենիս իւրեանց. Ա. Ա. իրրե անկան 'ի ձեռս թշնամեաց, և տեսին ' թէ չիք ինչ յոյս փրկութեն, Աղեղէ հրամացեաց իւրոցն փախչիլ որբան հնար և արագապէս, և փրկել զանձինս վասն կարե որ պիտոցից հպիրենեաց: Եւ ինքն ունելով 'ի ձեռին զիւր սուսեր՝ գճեցաւ 'ի ծունկս, և ոչ թողոցը զթշնամիս անցանել. և հրազդումն 'ի նոցանէ կոտորեալ՝ վերջապէս շամփուրեալ նիզակաւ՝ և հան զոգի, թագաւորելամս ինն:

'Դարեհ յաղթեալ 'ի մարտին՝ որ առ Ա. Ա. բելաւ՝ փախեաւ 'ի վերին նահանդս իւր, ակն ունելով առ մեծի հեռաւորութեալ վայրաց՝ դատանել հնարս և զժամանակ վերստին զօր զումարել: Ա ամս որոյ և նախ չորաւ յիշերաւանս, ուրանոց մնացեալ գժամանակի ինչ՝ զմնացող զոր զօրաց փախստական և զելոց 'ի պատերազմէն՝ ժողովեաց և որոց զէնք պակասեալ էին զինեաց ըստ առաջնայն կուռ զինու: 'Ա, ոյնպէս և 'ի մերձակաց ազգաց ինզրեսց ինքեան զօդուութիւն, և յորդուքէր զնոսա 'ի ձեռն նախարարաց առարելոց, և այլոց իշխանաց՝ որբ էին 'ի կողմանս Ինակարիացուց և 'ի վերին նահանդս, սլահել զառաջին սէր և զհաւասարմութիւն առ ինքն:

Օսպնու ժամանակաւ Աղեքսանդր Թաղեալ զանկեալսն 'ի մարտի, և մուտ յԱրքելաւ. և զմեթալմութիւն աւքունի զարդուց և դանձուց (վասն

զի եպիտ անդ զերիս հազար տաղանդս արծաթոց,)  
երեր՝ ի ձեռս անդէն : Իւլ զմաւ ածեալ՝ թէ  
շըջակաց ողն՝ ի բազմութէ գիւց գիւրաւ կարէ  
սպականէլ, վութապէս վոխեալ զբանակ իւր՝  
գիմաց՝ ի Խարիլոն հանդերձ համակ զօրօք : Եւ  
քանզի բնակիչք Խարիլոնի ընկալան զնս սիրով  
և զՄակեդոնացիս պահէին կարի ինամակ, վաճ  
որց և նա յետ կրելց նոցա զայնքան աշխատան  
և զթշուառութիս՝ ետ նոցա ժամանակ հանդւ-  
տեան . և տռաւել քան զերեառոն առուրս՝ ՚ի  
պատճառս այնքան լիութե և տռատութէ, և  
քաղաքացեացն սիրոց՝ Թայ անդէն :

Յետ սցնորիկ թողեալ զլգաթոն Պեղնեա-  
ցին եօթնհարիւր Մակեդոնացւովք՝ ի պահզա-  
նութիւ ամրոցին, զ Խարիլոն և զնախարարութէ  
նորս մինչև՝ ի Ալիի իսա՝ ետ՝ ի կառավարութէ  
Ապողոդոքց Ամփիուսեցւոց և Մենիտեաց Պ-  
լեացւոց . և տռաւել նոցա զհալաց տաղանդս  
հրամացեաց դումարել զզօրս՝ ի վարձու՝ որչոք  
համար իցէ բերել՝ ի ձեռս ՈՒհըանաց, կմ Ո՛չժեք  
նեաց՝ որ մասնեաց զամբոցն Սարդիացւոց՝ (որպէս  
առայաք՝ ի վեր անդը) ետ զ ձայսաստան : ՚ի  
գըամեց զզօրս ստացաւ անդէն, ետ իւրաքանչիւր  
ոցըուձից վեց միաս, ՚ապաստաւոր զօնաց՝ հինգ-  
իսկ Մակեդոնացւոց՝ որք զփաղանգն բաղկացւոց  
ասմէին հողուեալ՝ ետ նոցա ձըի :

Եօթէն բակ Ալեքսանդր յուղէ անիւալ է  
Խա

Բարիլոնէ էր 'ի Ճանալորհի, ահա հինգ հա-  
րեւը այր հեծեալ 'ի Վակեղոնիոյ, և վեց հա-  
զար հետեակը, ընդ որս և վեցհարիւր արք հե-  
ծեալք 'ի Յըրակիոյ, երիտ. հազար և հինգ հա-  
րեւը 'ի Յըրայլիացւոց, և 'ի Պիղոպոնէ սոսէ շըրեք  
հազար հետեակք, և գրեթէ հազար արք հե-  
ծեալք ևս հասին առնա յ Անտիպատրոսէ 'ի յա-  
ւելուած զօրաց, Անդ նոսա 'ի միասին եկին 'ի  
Վակեղոնիոյ յիսուն արք որդիք բարեկամաց Ա-  
ղեքսանդրու առաքեալք յանձնապահութիւն ար-  
քացի 'ի հարց իւրեանց. զորս առեալ նորառւշ  
եղ առաջն զեալ ճանապարհին. և 'ի վեցե-  
ռորդ առուր և մուտ 'ի Սիտագինեան իշխանութիւն:

Եւ քանզի յացնմ ելկրի նմ ինչ հարկաւա-  
բագոյն առ 'ի պէտս պահպանութեն և սննդեան  
մարդկան գտանէր առատ, վասն որոց և զբազում  
առուրս յամեաց անգէն, ոչ այնքան դադար տալ  
զօրացն կամելով, որբան խորհեր զկարդ նոցուն  
մանրամասնարար քննել, և զօրապետացն առնել  
փոփուխութիւն. և զզօրս իւր բազմութիւն նպատա-  
ռուաց և ջերմեռանդութիւն զօրապետաց արիտ-  
ցուցանել: Օխորհուրդն իւր փութապէս եհան  
'ի գլուխ. և քննեալ կարի արթնութիւն զամայր,  
զընտիրոն և զպատուականս 'ի նոցանէ ամբարձ  
յաստիձան վասաց. և այնու իսկ առաւել արար  
դինքն նոցա սիրելի: Աշդ նախպէս և 'ի սոսկա-  
կան զինուորս առնել կարգութիւն գեղեցիկս  
և զբազում գտեալ արժանաւորս 'ի գործս մե-

ձամենքս պիտանացուս՝ էած զնոսա ՚ի պիճակի բարի. Այսու և զանակաւ կարգաւորեսլ՝ այնպէս գրաւեաց զսիրտս զօրաց իւրոց, զի սկսան առաւ ւել ևս եռանդեամբ սիրել զնա, զհըսամանեն նորտ մեծաւ սիրով կատարել. և արութէ զմիմետմբք գերազանցել, և ինքն պատրաստեցաւ յայնոսիկ շահատակութիւն՝ ուրք մնային տակաւին վասն նի.

՚Ի հասանել իւր ՚ի Շօշ՝ գրաւեաց զգահն արքունի զգերահռչակն ՚ի բովանդակ աշխարհի. զոր Արուլիդէս յօժարակամ մատնեաց ՚ի ձեռա նորտ. Գրեն ոմանք՝ թէ ինքն ՚Իարեհ հրամայ եաց զտցն առնել պինոցիկ՝ զորս առաւել հաւա տարիմ համարէր ինքեան. և զայս առներ վասն ոյն, զի Աղեքսանդր զպատուական քաղաքու և զմեծամենք գանձս ստացեալ՝ յապաղեացէ նովաւ, և ինքն յայնմ միջոցի գտցէ ժամ պարապոյ պատ ըաստիլ ՚ի մարտ. Այսու օրինակաւ Աղեքսանդր տիրեալ քաղաքին և սպարանից՝ հանդ երձ բովան դակ գանձուք, և դիտ ՚ի նմա զքառասուն հա զար տաղանդս ոսկւոյ և արծաթոյ անկործ. Այս գանձ մեծ ընդ ժամանակս բազումն մնացեալ ան շարժ՝ գտանձէր անդ էն, և թագաւորք պահէին զայնոսիկ առ յանկարծական իմն դիպուած՝ զի հա նապազ զնոյն ունիցին առ ձեռն պատրաստ ոգ նութի. Իաց յայնցանէ էին և ինն հազար տա ղանձք ոսկւոյ հատեալք յանուն ՚Իարեհ ՚ի.

՚Ի ժամանակի քննութեն ոյսոցիկ գանձուց դէպ եզե հանդիսիլ արքոյին նորանշան ինչ վահ

Վրանդի սա նստէր՝ ՚ի զահի՝ որ առ համեմատ-  
առւթիւն հասակի նորա եր կարի բարձր, վասն ո-  
ւց և մին ՚ի շըջակացից ահսեալ՝ թէ ոտք նորա  
կախեալ կոն և ոչ հասանեն ՚ի յատակն՝ բեր-  
եալ զաթռոն ՚ի արեհի եղ ընդ ոտիւք նորա-  
և զի կարի յարմար գիպաւ բարձրութիւն աթռ-  
ացն նմին իրի և ՚զիքսանդր գովիտց զնա. Ոմն  
՚ի ներբինեաց՝ որ շուրջ զգահիւն կացին, կարի  
շարժեալ յայս վաղվազ փոփոխութիւն բաղդին՝ ե-  
լաց սաստկապես. զոր իրբեւ եաեւ ՚զիքսանդր՝  
եհարց ցնա, թէ չառն էր լու. Պատասխանի եա-  
նմա ներբինին և ասէ. որդ քառայ չո իմ՝ ողես-  
նու եւ ՚ի արեհի. ոյլ տանը եւ շուրջավան իմ ջերմ-  
եանդութիւն ունեմ զնանին լուծուացն իմ, ամի իրի  
ու իսրեւ ունենալ առանց արտառաց, զի ալուն՝  
որ առանց ՚ի մէջէ յաբդէ եր, ոյտէ հոսէալ ե յոյ-  
անիւն անորդութիւն:

Այսու պատասխանեաւ գարճեալ աըբացին  
յուշիւր՝ զմաւ էած՝ թէ քանի՞ մեծ փոփո-  
խութիւն է եղեալ յարբացութեն Պարսից, սկսա-  
պա խորհուլ՝ թէ ինքն վարի կարի գոռոզութ,  
ե ընդ սարկամեծարաւթիւն՝ զոր արժան է յուցա-  
նել առ կերիս՝ է անհամեմատ յոյժ. Ոտն  
որս և կոչեալ առ ինքն զծառացն զացն՝ հրա-  
մայեաց ՚ի բաց բառնալ զաթռոն զացն. Այլ  
ասկացն Փիլովտ՝ որ առ նմա մերձ կացը՝ ասէ.  
թէ ոյ իւն՝ որսոյ, ոչ ՚ի հոդուուն առանձիւ, չառն  
ու առանց հրամանի ու ոբարա. ոյլ շուրջ հածունը

և պնօքենութեան հոգւոյ էլեւ բարուց դիպառ։  
Օսր արքացն առեալ իւր նշան բարի՝ հրամաց  
եաց զաթուսն դնել անդրէն 'ի տեղի իւր։ Յեւ  
սպառիկ զմայրն 'Դարեհի, զդստերս և զորդի նո-  
րա թաղեալ 'ի ԸօՀ կարգեաց նոցա դաստիւրակո՝  
զի ուսուցյն նոցա զլեզու Յունաց։ Եւ ինքն զօ-  
րօք հանդերձ յուղի անկեալ անտի՝ 'ի չորս աւուրո  
եհաս 'ի գեան Տեղըիս։

Այս գեան ելեալ 'ի Լեբանցն Ուգսեանց  
հայի հոսէ ընդ անհարթ վայրս լցեալս մեծամեծ  
և բազում բիրովլք և գահիւր, մինչեւ 'ի հազար  
վարսախս, ապա շարունակեալ զընթացս իւր ընդ  
դաշտս՝ հոսէ անխռով իւր վեց հարիւր փարսախս  
և վերջապէս անկանի՝ 'ի նոցն Պարսից։ Աղեք-  
անդր անցեալ Ը գեան՝ գիմեաց յերկիրն Ուգ-  
սեանց՝ յաշխարհ արդաւանդ և բիրով։ Քանզի  
սցս գաւառ ոռոգեալ 'ի բազում գեաց՝ առա-  
տութք բերէ զայ ազգս պաղոց, զորս չորացու-  
ցեալ յաշնան՝ պատրաստեն միրդ ս անուշամու  
զորս վաճառականք ընդ գեան Տեղըիս անին 'ի  
Պարիլոն։

Աղեքսանդր եկիւ զայ մաւաս 'ի նա գրա-  
ւեալս պահապան զօրօք 'ի Աղեաց ազգականէն  
Դարեհի, որ ունէր առ ինքեան զօր բազում  
յոյժ։ Եւ մինչ նա զամբութի վայրացն քննէր  
և առանցէր՝ եթէ ընդ ժայռալիր վախս անցա-  
նել չէ հնար, մի սմն 'ի բնակչաց վայրացն աղ-  
քաւ Ուգսեացի, որում ծանօթ էին վայրքն,  
իսո

խոստացաւ Աղեքսանդրու անցուցանել զջօրսն ընդ  
պժուարին և անձուկ ձանապարհ ինչ . որով ՚ի  
վիրայ զլեց թշնամեաց իցեն . Աղեքսանդր ընծ  
կալեալ զբան նորա՝ առաքեաց ընդ նմա զսակա-  
ւաթիւ զօրս . և ինքն յայնմ միջոցի կամելով  
որբան հնութ իցէ՝ մարբել զանցս իւր, անկաւ ՚ի  
վիրայ թշնամեաց՝ որբ զմուտսն ունէին, և  
մտեալ ընդ նոսա ՚ի մարա անհնարին՝ մանաւանդ  
զէ ՚ի տեղի խոնջելոց և վշատելոց յաջորդէին  
պյլք, մինչ բարբարոսք զպատերազմաւ պատա-  
զէին՝ յանկարծակի առաքեալքն յառաջադպն ը-  
ազառաժս հանդերձ առաջնորդաւ իւրեանց՝ ՚ի  
զլուխ թշնամեացն երեւցան :

Աարբարոսք պյտու անակնուն ելի դիպուա-  
ծով անկեալ յերկեւզ սաստիկ՝ դարձան ՚ի վտ-  
խուտստ, ուստի և արբայն տիրեալ մտից անցիցն  
՚ի դոյզն ինչ միջոցի հնազանդեցոց ընդ իւրեւ  
զբուժը քազաքս Ուգսեանց :

Ենաի դէմ եղեալ յուղի անկաւ դէպ ՚ի  
Պարսս . և ՚ի հինգերարդ աւաւը եմուտ ՚ի  
Սասաւանէան վեհա անուանեալ տեղին, զորս ար-  
դէն իսկ բռնակալեալ էր Արքիոքարզան հնդետա-  
սան հազար ոտանաւոր զօրօք և երեքհարիւր հե-  
ծելովք : Ակնունելով արբայի տիրել անցից վայ-  
րացն բռնութիւ գնայր զօրօք ընդ անձուկ և  
զժուարակոխ տեղիս առանց արդելմանց ինչ ՚ի  
թշնամեաց . և բարբարոսք առ ժամանակ մի թողուին  
զնոսաւ Այս երբէ եհաս ՚ի միջին կէտ անձուկ

և դժուարին վայրացն , ահա՝ յանկարծակի սկսան  
տեղալ 'ի նսսա 'ի վերուստ զբազմաւթի մեծա-  
մեծ վիմաց , և վնաս մեծ հասուցեալ 'ի Ո՞ւ-  
կեդոնացիս՝ ո՛չ սակաւ մարդիկ հոսեցին . Ի՞ա-  
դումք ես 'ի նոցանէ ձգէին 'ի նսսա զէնս , և  
անդագար 'ի բազմաւթէնէ անտի խիտ առ խիտ  
ընթացողաց՝ սպանանէին զոմանս . Իսկ այլք քա-  
րածիդ լեալ 'ի նոսա՝ որք անցանելն հացեց հաց-  
թէին , յետո ընդ կրունկն ընկրկէին .

Եւ քանզի զդժուարութի վայրացն ինքեանց  
նպաստ առեալ , եր՝ զորս կուասրէին , և եր՝ զորս  
կարելիք խոցէին , նմին իրի և Աղեքսանդր ո՛չ  
կարելով զայն ոմիր նահանջել յետո , և առսի ալ  
թէ 'ի թշնամեաց և ո՛չ մի ոք է սպանեալ , և  
ո՛չ վերաւորեալ ոք . իսկ յիւրոցն զօրաց բազումք  
կորնչին , և գրեթէ բովանդակ յառաջամբարտիկ  
զօրքն չարաչար խոցոտեալ նն , ետ նշան փողով  
դառնալ յետո . և շրջեալ ընդ կրունկն 'ի նեղ  
անցիցն յայնցանէ իրք ասպարհ զս երեքհարիւր ,  
ընտրեաց տեղի վասն բանակին . Ըստ եհարց 'ի  
ընակչաց տեղւոյն՝ թէ է՞ արդեօք այլ մուտ ու-  
րեք . սկատախանի ետուն նորա 'ի միասին , թէ  
ո՛չ կոյ ուրիշ այլ ժամապարհ , բայց կոյն հնո՞ր և  
ճռոտ առնել անդր շատի պատեալ պաշովան . այլ  
բաղաւմ յանահաց պիտու ին առ այն .

Ա ըրացն անաբգութիւն համարէր անձին թա-  
ղուլ զանկեալսն առանց թաղման , և ամօթ մեծ  
դնէր ինքեան վասն այնու ազաւել զնոսա , քանզի

այնու տապը նոցա՝ ակն յանդիման թշնամեաց իւր  
բոց զյաղթանակն , վասն որոյ և հրամացեաց ա-  
ծել առ ինքն զամ՝ գերիս՝ որ միանդամ՝ գտանէլն  
'ի բանակի անդ . Եշ 'ի միջի սոցա ոմն՝ որ գի-  
տէր զերկուտ լեզուտ , թ' զՅունաց և զՊարսից .  
և որ յացտնեաց զինքենէ լինել ազգաւ Ի իկիա-  
ցի , և երբեմն անկեալ 'ի ձեռս նոցա դերուչ ,  
և թէ այժմ հովուե զհօտս խաշանց 'ի մերձա-  
կաց լերինս , ուստի և տեղեակ դրլով ինքն վաց-  
ըացն դաւառին՝ կարէ ընդ անտառան ահցուցանել  
զզօրսն , զի եղիցին 'ի յետուտ զօրացն՝ որք պա-  
հէն զանցս մտից թշնամեացն . Արքացն խոստա-  
ցեալ տալ նմա պարդե մեծ , և հետեւալ զինի  
նորա զօրոք հանդերձ , եանց զիշերացն զբարձրա-  
քերձ լերինս՝ թէպէտ և մեծաւ աշխատանօք ,  
վասն զի պա՛րտ էր նմա ընթանալ 'ի վերոց ան-  
հուն ձեան , ասրառաժ և անկոխ լերանց , խորտ-  
որոց և աւազուտ վայրաց : Յաղթեալ սցոցիկ  
դժուարութեց 'ի բըրեւ մերձ եղեւ առ առաջին պահ  
թշնամեաց , կատորեալ զսմնեսին՝ որք անդն էին  
բարբարոսք , կալաւ զմացորդս , և զերեաց զա-  
նոսիկ որք զհետ նոցա կարգեալ էին յերկրոր-  
դում 'ի պահպանութե . Ա երջապէս զեղեալսն  
յերբորդում բանադասեն՝ 'ի փախուստ , աիրեաց  
բովանդակ անցից , կատորեալ զմեծադոցն մասն  
զօրացն Արքորբարզանաց :

Ապա չուեալ 'ի Պերսեպօլիս՝ զՃանապար-  
հացն Ընալաւ թուղթ 'ի Տրդատաց էլմանէն քա-

շաբին, յորում գրեալ էր. թէ էլեւ Աղվանիքը  
յոն այն էաւ պահու յորը իւսւ յանուու ժուցի ՚ի  
մեռայ այնոցի՞ որդ իւսն պահէլ զտուուն վասն ՚ի ա-  
յինէ, մասնեացէ դայն ՚ի նոցա նորս. Ալասն որոց  
Աղեքսանդր դիմեաց ՚ի Պիլսեպօլիս կարի փու-  
թապես, և անցոյց զզօրս իւր ընդ դետն Երասխ  
կամբջով, ՚նդ անցանել նոցա ընդ գետն՝ դէպ  
եղեւ նոցա տեսանել զտեսիլ ողորմ և քստթիլի,  
որ արդարեւ շարժէր առ պատճառս անդթուն  
զնախանձ, իսկ առ կրողսն զոցն անդարձ թը-  
ւտառութիւն զպորով, և առ հասարակ յամենեսին  
զկարեկցութիւն:

Քանզի չւ առաջ եղեն նց Յայնք գերեալք  
յառաջադայն ՚ի թագաւորաց Պարսից, որոց թիւ  
հասանէր յութհարիւր, որ ըստ մեծի մասին էին  
ծերացեալք և առ հասարակ ամենեքին անդա-  
մատեալք. զի սմանց ձեռք, սմանց ոտք, սյլոց  
լսելիք, և կիսոց հոտոտելիք էին կտրեալ. իսկ  
որք ՚ի նոցանէ պիտին զարհեստ ինչ կամ զգի-  
տութիւն և յայնմիկ էին կրթեալ, զնոցին հատեալ  
զոյլ անդամն, զոցնոսիկ միացն թողլւին, որք առ  
զիտութիւն կամ յարուեստ էին պիտանիք. Ուս-  
տի և ամենեքին՝ որք զծերութիւն նոցա և զսե-  
զութիւն տեսանեին, յողորմ շարժէին և ցաւակից  
լինեին նոցա՝ և մանաւանդ Աղեքսանդր, որ ոցն-  
քան կարեկից դառւ նոցա, զի ո՛չ կտրաց սանձել  
շարտասուս աչաց իւրոց. Կորա ամենեքին իրբե-  
՚ի մեռչ բերանց ինը էին ՚ի նմանէ զօդնութիւն  
՚է

՚ի թշուտառութե իւրեանց :

Ա ան որոյ և կոչեալ արքացն առ ինքն զծերագոյնս 'ի նոցանէ , և ըստ վեհանձութե իւրում պատուեալ զնոսա՝ խոստացաւ առնել նց զամ օգնութիւնս , և առաքել իսկ 'ի հայրենիս իւրեանց . Ա. յլ նոքա ժողովեալ 'ի միասին և խորհուրդ արարեալ՝ բարւոք համարեցան մեալ անդ , քան դառնաւլ 'ի հայրենիս . քանզի որով հետեւ 'ի դարձի անդ մեայր նոցա բաժանեալ յիրերաց ցիրուցան լինել յայլե այլ տեղես , եր կնչէին՝ զի մի՛ գուցէ եղից/ն ծաղը այլոց . այլ յորժամ 'ի հասարակաց թշուտառութե անդ դու լով կեցցեն 'ի միասին , կարծէին ունիլ միսիթա ըութե 'ի փորձութե անդ 'ի դժբաղդութեանց այլոց նմանեաց : Աւստի՝ նոքա վերստին կացեալ տուաջի արքոցի , և զիսուհուրդս իւրեանց յայտնեալ՝ աղաչէին զնա ցուցան/լ զողորմութի՝ որպէս վայելէ առաջիկոց վեհակի իւրեանց :

Վ զեքսանդր գովեալ զմիտս նոցա՝ ետ իւրա քանչիւր ումեք երեքհազար դրամս . հինգ հանդէս տռնացիս , և նոյնչափ ձորձմ կանացիս , եր կուս զցդս եղանց , յիսուն ոչիսորս , և նոյնչափ դրիւս ալեր , ապա աղատ արարեալ զնոսա յամ հարկաց արքունի՝ հրամացեաց հոգաբարձուացն վերակացու լինել նոցա , զի մի՛ ոք մեղիցէ նոցա , և ոչ հասուցէ նոցա զրկանս ինչ : Ա. յսու ոզոր մութե Վ զեքսանդր , որպէս գթութե նորա և մարդարերութե եք անդ , զթշուառագոււնիցն 'ի մաքր:

մարդկանէ թեթև ացոց զեղկելու Ծիռն :

Վակա ցուցեալ զՊ. բսե պօլիս քաղաք աթու  
ո անիստ արքոցութե՛ Պարսից՝ ասէ յՎակեդու-  
նացիս, թէ այս տողու սասաւէլ չան զայլ ոճ շա-  
զան ԱՀ-իոյ՝ վասնիտու՞ն էր Յունաց : Վասն որոց  
և ետ զայն 'ի յափշտակութիւ զօրաց, արգելեալ  
զնոսա՝ զի առ արքունի ապարանան մի մերձեսցինս  
Վա էր բաղմադանձ քան զնմ՝ քաղսքս ընդ բո-  
վանդակ տիեզերս . յորում և տունք սոսկականաց  
ամենայնիւ գտանէին ուելձացեալ և չոխացեալ .  
Ուստի՝ Վակեդոնացիք յարձակեալ 'ի նա՝ զնմ՝  
այս կոտորեցին սրով . և զմեծամն ծ գանձս, զզա-  
նազան զարդ և զշտեմարանս կողոպտեցին :

Յացնում միջոցի յաղթականքն զբազում արծաթ և  
ոչ սակաւ ոսկի, զմեծադին հանդերձս, զծիրանիս  
և զկերպասս ոսկեթելս գտանէին և 'ի ոգարգե-  
ստանացին : Եյսու և զանակաւ մեծն և 'ի բոլոր  
աշխարհի հռչակաւոր մայրաքաղաքն Պարսից ան-  
կաւ 'ի յափշտակութիւ և աւերեցաւ յոյժ յոյժ :

Վակեդոնացիք թէսէտ զառ և զաւար ան-  
կելոցն և զգանձս մեծամեծս կապտեալ կողոպ-  
տեցին բազում յոյժ . սակայն ոյլիս բազումն կա-  
մելով ոչ շատանային նովաւ . և 'ի յափշտակու-  
թեան յայն աստիճան հասին ան նիշնանութե՛  
և անյագութե՛, զի տեսեալ առ ընկերս իւրեանց  
զաւար բազում սկսան սպանանել զմիմեանս : Ո-  
մանք գտեալ զիրս մեծադինս՝ հատեալ սրով 'ի  
մասունս՝ առնաւին, ոմանք ևս կամելով տալ պատ-

բաժ՝ ՚ի նախանձելի իրաց՝ ՚ի սրտմտութե՛ անօքն  
զի ձեռն մըսէ ին յացն՝ հատանէ ին զձեռու իրերաց.  
Օկանցս հանդերձ զարդուք իւրեանց յափշտա-  
կեալ առ ՚ի բռնարարութի՛ վարէին ՚ի գերուին  
Ա. յուր օղինակու Պիերսեպոլիս սրբան առաւել-  
գերազանցէր երջանկութի՛ իւրով քան զայլ քա-  
զաքս. պնչափ առաւել մեծամեծ թշուառութեց  
գոտու ենթարկեալ:

Ապա Աղեքսանդր մտեալ յամբոցն՝ ստացա-  
լքանձնն՝ որ անդ կացին. Որբ ՚ի Ավերունէ ա-  
ռաջին թագաւորէն Պարսից և այսը ՚ի յաջորդաց  
նորա գոլով բազմապատճեալ եկամտիւք՝ զբաշ-  
մութի՛ ոսկեց և արծաթոց պարունակէին յինք-  
եանս. Քիանզի հարիւր քսան հաղար տաղանդք  
արծաթոց գոտան անդ. Եւ իրրե Աղեքսանդր  
եդ՝ ՚ի մտի զմասն ինչ այսոցիկ դրամնց ՚ի պէտ-  
զօքացն առնուլ ՚ի կիր, իսկ զմասն ինչ թողուլ  
՚ի Ըօ վասն պահպանութե՛, հրամացեաց ժողո-  
վել ՚ի Խորիլոն և յիշկբատանա զբազմութիւն  
բեռնարարձ և լծակիր ջորեաց. և ընդ նոսին զե-  
րիս հաղարս բեռնակիր ուղարոց, որովք և վո-  
խագընեաց զամ գանձնն ՚ի տեղիս պատրաստեալու  
յառաջակացն. Մանաւանդ զի և զընակիչն ա-  
տեսցը չարաջար, ուստի և ոչինչ կամէր հաւա-  
տունոցա. և ինդէք ՚ի յետին ամսոցութի՛ ածել-  
գՊիերսեպոլիս:

Օտրքունեացն առ մեծաշուք շինուածոցն յաց-  
նել ինչ սակաւուք ոչ համարկմանս զի. Վայրցն  
աբ

արժանի յիշատակաց՝ պատեալ էր երեք պարսպազ :  
 յորց առաջինն կերտեալ գեղեցիկ՝ բարձրութիւն  
 էր վեշտասան կանգուն . և ուներ զիւը ամբուխա :  
 Այսն ըստ ամի նման առաջնոյն , այլ միացն  
 բարձրութիւն կրկին առաւել քան զայն : Իսկ եր-  
 բարդն ուներ զձեւ քառանկիւնի . և բարձրութիւն  
 նորա 'ի վաթսուն կանգուն ձգէր . և կերտեալ  
 էր 'ի պնդակազմ վիմշ՝ իրը վասն յաւիտենից :  
 Յիւրաքանչիւր կողմունս էին դրունք պղնձիք . և  
 մերձ առ նոսա վանդակապատ պղնձի 'ի քան  
 կանցնաց . յորոց մին յարծարծել զերկիւդ իւրով  
 սեռութիւն , իսկ միւսն առ յաւետ ամութիւն  
 վայրացն էին կառուցեալ : Յարեելից կուսէ ամ-  
 բացին էր լեռոն մի հետի 'ի նմանէ չորիւք առ-  
 պարիզօք , կամ ջորեքհարիւր կանգնովք , անուտ-  
 նեալ արքունական . վասն զի 'ի նմա էին գերեզ-  
 մանք թագաւորաց : Վիանզի 'ի մեջ նորա հա-  
 տեալ էր վէճ . և 'ի կեղրոնի ուներ զբազում  
 սենեակս . յորս ոչ գտանէին մուտք ինչ շինեալ  
 ձեռամբ մարդկան . այլ մեքենացիւր սմամբք ամ-  
 բարձեալ՝ գնէին անդ զդադաղն մեռելոց : Յաս  
 միկ ամրոցի վասն թագաւորաց և զօրաց էին մ-  
 եաշուր սթեանք , և շտեմարանք 'ի պահպանութիւն  
 գանձուց էին 'ի յարմար տեղիս յոյժ :

Բայս Եղեքսանդր արարեալ հանդէս յաղ-  
 թանակի յաղագս բարեբաստէկ ընդունելութեան  
 յաղթութեան , արար գիցն զմեծահանդէս զոհս  
 պատարակաց : և վասն բարեկամնց պատրաստեաց  
 ուեւ

անդան մեծ և բարելի : 'Ի խնջոյն հրաւիրեալ  
էին և կանցք՝ որք արհեստ էին արարեալ ինք  
եանց դշեռւթիւն և զպունկութիւն . Եւ իբրև  
արբունքն յաձախեցին , բազումք 'ի նոցանէ ար-  
բին պնդան՝ զի և 'ի մտաց թափեցան : Յացնմ  
ժամու ոմն 'ի կանանց եղելոց 'ի խնջոյն՝ ա-  
նուն թապիդա՝ ազգաւ Վատահիեցի ասէ . Թէ ԱՀ-ից  
սահմար արացէ Գործ մեծ առաւել առն զբա արացն ի-ը  
յելլուիու . Ելեւ 'ի ժամու ինչուից և իրականա-լիւ , հոր-  
աչէցէ ընդ նասա 'ի յարշունիւ անդ . և յորդամ Գործու  
Պար-ից հուշովելս ընդ այնան ժամանակ 'ի որոշն  
ինչ ժամանակի յետամբ ի-անանց իրեցին . Եւ իբրև  
այս բան 'ի մէջ մատագատունկ անձանց տարա-  
ծեցաւ , որք յացնժամ մինչև իսպառ արբեալ էին ,  
սկսան աղաղակել միաձայն , Թէ ինքն լուցցէ զա-  
ռաջինն , քաջալերեալ և զայլս՝ առնուլ զլապտերա-  
և վրեժակել զանարդանս՝ զորս անցուցին Պար-  
սիկք ընդ տաճարս Յունաց : Օ այս մեծաւ բա-  
ցագանչութիւ և խնդամիտ աղաղակաւ ընկալան  
և ացլք . ասելով . Թէ ոյս Գործ վայելէ հոյն ԱՀ-  
վայսունդը ու :

Եւ իբրև արբայն շարժեցաւ 'ի բանից առ  
աիս . նմին իբի ամենեքին թողեալ առ ժամանակ  
ինչ զարբունան՝ յարեան ասելով . Թէ զհանդէ-  
յաղլեանաին էադարին 'ի դանիսիայ : Յանկարծակի  
ժողովեցաւ բազմութիւ մեծ լապտեր 'ի ձեռին-  
և առեալ ընդ ինքեանս զկանայս՝ որք 'ի ինջոյն  
անդ գտանէին , երդէին և նուազէին երաժշտա-

կան դորձեք, արքայն առաջնորդեալ՝ ի ծմբի՝  
դայ սլունիկ կնոշէ, երդովք և նաւագօք չոքաւ  
• ի ժաղովն՝ ուր սպան էր լինել կաթաւուն և  
սլաքերգութե՛ : Եւ Ուստի արքայի երկրորդ յետ ար-  
քայի եարկ յարըունիս անդ զլուցեալ լապտեցն:  
իսկ այլք հետեւ եցան օրինակի նորին : Եւ ացս-  
ուէս ՚ի դոյզն միջացի բոցն աաքածեալ թնդ ամ-  
կալմունս շուրջանակի՝ յաձիւն դարձոյց զառա-  
րանսն : Եւ առաւել զարմանալոց արժանի էր ոցս,  
զի զեղեանաւոր դործ Քասերբսեաց արքային Պար-  
սից, զոր եցոց ամբոցին Խթենացւոց, կին մի-  
ծնեալ՝ ի նոյն աւերեալ ամբոցի և քաղաքի՝ յետ  
անցանելոց ամաց քաղմաց նովին եղանակաւ վըե-  
ակեաց:

Յետ սպառիկ Աղեքսանդր դիմեաց յայլե-  
սց քաղաքս Պարսից, և զոմանս առեալ բռնու-  
թեամբ, իսկ զայլս փառօք անարդամն ծարութե՛  
իւրոց ստիպել լինել անձնատուր՝ ինքն պնդեցաւ  
շհետ Պարեհի . որ արդէն իսկ սկսեալ էր դու-  
մարել զզօրս ՚ի Խակարիացւոց, և յայլ նախա-  
ըաբութեց, այլ գոլով արգելեալ յաբակութենէ  
թշնամոյն՝ երեսուն հազար զօրօք Պարսից և վը-  
ձաւոր Յունաց փախեաւ ՚ի Խակարիա, և յայս-  
միկ անդքագարձ իւրում ձանապար հորդութե՛ իսո-  
քամանկութ Խիսսեաց նախարարին Խակարիացւոց  
ապանաւ : Եւ այնինչ նա եհան զոգին, ահա և  
Աղեքսանդր հեծելովք իւրօվք և հաս աս նա . այլ  
դտեալ զնա սրդէն իսկ մեռեալ՝ աբար նմա յսւ-


զարիաւորութեարքունական։ Ոմանք պատմեն թէ  
Աղեքսանդր հասեալ առ նա՝ մինչ նա տակաւին  
կենդանի էր՝ կարեկից եղեւ նմա յոյժ յոյժ։ և  
քանզի Դարեհ աղաջեաց զնա չըսպուլ զսուանութե  
իւր առանց վլէժխնդրութե, վաճա որոյ և Աղեք-  
սանդր խոստացաւ առնել զայն, ուստի և խնդրէր  
հասանել Բախսեաց։ այլ քանզի նա յառաջադաշն  
փախուցեալ էր՝ ի Բակարիա, վաճա որոյ և ոչ  
ակնկալեալ հասանել նմա՝ գարձաւ յետո։ Այսու  
օրինակաւ էառ վախճան Դարեհ մեծ թագաւոր  
Պարսից, որ արգարե չէր ինչ ընդհատ քան զբա  
զում թագաւորութան։ թիւ և առաքինութ։ այլ  
քանզի պարտ էր գահին Ախրոսի կործանիլ ձե-  
ռամբ Աղեքսանդրի, նմին երի և ոչ զԴարեհ  
սլահեաց՝ ի նմին մեծագործութեարք իւր։ Օսցո  
ձեւ ունեին յայնժամ գործք Ասեց։

Իսկ ՅԵղոպիս՝ Լակեդեմոնացիք կրեալ՝ ի  
սլատերազմի վեաս մեծ՝ բռնադատեցան առաքել  
զեսուանս առ Անտիպատրոս, որ յամեցոյց զպա-  
տաւիսանն մինչեւ՝ ի գումարութե բովանդակ Ծու-  
նաստանի։ Ծւ ժողովն՝ որ եղեւ՝ ի Առնթոս,  
մանքախցզ քննեալ յերկուց կողմանց՝ վճռեաց  
տալ զիբոն՝ ի վերահսութե Աղեքսանդրու։  
Ուստի և Անտիպատրոս յիսուն այլ ՚ի պատուա-  
կանացն Ապարտացոց էառ ՚ի սլատանդ, և  
Լակեդեմոնացիք առաքեալ հրեշտակութիւն յԲա-  
սիա՝ խնդրեցին յԱղեքսանդրէ զթողութիւն։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴԻ :

Յազմէս ունելոյ Աղքատանդրու ՚ի Արքան, և ընդունէց  
Աշուտաց, և գուստեան թառակառաւու ուշերդն Աղքատ-  
աց ու Աղքատանդր, և անհնիոյ Աղքատանդրու ՚ի  
շառայանիո Պարուց, և ներգունիւն շառակար ան-նե-  
ցան ՚ի Պարուցիոն և ՚ի Փելքուա :

Բիսս թագաւորէ և խոռովէ զբակորիացիս: Աղքատանդր  
պերստին քաջալերէ զզօրս, և պարզեա առասոս քաշնէ ՚ի յ  
Զօրագողով ՚ի Արկանս: Գետն Մտիքցիս: Ճառչն Արկա-  
նայ: ՚ի Արկանս կողմն ինչ է առատարեր: Մեղաք ան-  
ուանեալ Անթրիդոն գործեն զմոզո: Զօրագոլուիք Դարե  
հի և գանձակից Յոյնք անձնատուր լինին Վաղքանդրու:  
Զիանդ սուամձեալ են Մարդոյք: Բուկեփաղ յարիշատ-  
իի, և սոսորագըռութին նորս: Դշնոյն Ամազոնաց թազիստ  
ըա: վասն սրդեծնութեան գայ առ Աղքատանդր: Ա-  
ղքատանդր ՚ի կիր առնու զովորութիւնս և զհանդերձ  
Պարսից: Աստիբարզանայ: միաւորութիւն ընդ Բիսսեայ:  
Աղքատանդր պատժէ զՓիլովա վասն ոչ ծանուցանելոյ ՚ի յ  
զկուաձնութիւն խորհեալ ը՛դդէմ իւր: Պատիժ Աղեք  
անդըռու Լինկեստեայ: Պարմենիովն կասկածեալ ՚ի յա-  
ւաձնութեան սպանանի խարդաւանութիւն: Զօրք դիւ-  
քամիւք ՚ի խոռվութիւն տարանջամին: Արիմասոյք՝ որև-  
էւերգետք ընդունին զլ' Աղքատանդր: Զօրագոլով ը՛դ  
դէմ Աստիբալ վանաց, և նուտծումն Արաքսուայ:



**Ա**իսս յետ մահուանն Դարեհի ընդ Աւա-  
բարզանոց, Բարզայենաւայ և այլոց բազ-  
մաց վախուցեալ յ Վղեքսանդրէ՝ և հառ ՚ի Բակ-  
տրիա. ՚ի 3643 ամի. Եւ քանզի վաղու ևս կար-  
գեալ էր ՚ի Դարեհի նսխաբար ՚ի վերաց գա-  
ւառացս այսոցիկ, և ժողովուրդն ճանաչէր զնա-  
քաւական. նմին իրի և յորդուեաց զնա լինել  
աղոտ, հաւատարիմառնելով զնա ստանալ զար-  
դիւնս այնու՝ զի երկին ըստ դրութե և զիւ-  
նակի իւր ունէր զմուտ դժուարին. և մարզիկ  
բազում են առ պահպանութիւն աղատութեն. և  
թէ բազումք ունիցին օդնել նմա. մանաւանդ  
զի զիարդաւորութիւն բովանդակ զօրացն առնցր  
յանձն իւր. Եւ յսու եզանակաւ իրախուսեալ  
զժողովուրդն՝ հրամարակեցաւ ՚ի նևանէ թագա-  
ւոր. Եպտ սկսաւ զօրամ ողով լինել, պատրաս-  
տել զէնս, և հօդալ զայնցանէ՝ զոր ինչ միան-  
դամ պահանջէր առաջիկաց դործն:

Եպնմ միջոցի տեսեալ Վաքսանդր՝ ևթէ  
Մակեղովնացիք զիահ Դարեհի վախճան մարտի  
վորկուցեալ կամէին դառնալ ՚ի տռւն, ժողո-  
վեաց գորս, և վաղելական ճառիւ շարժեաց  
զնոսա առ այն, զի նորա յաժարակամ յանձն ա-  
ռին ՚ի գլուխ հանել զշահատակութիւն. Եպտ ժո-  
ղովեալ առ ինքն զնոսատաւոր զօրս Եունաց,  
և սրժանապէս զովեալ զնոսա ըստ դործոց, ա-  
շատ աբար ՚ի ծառացութեն տուեալ իւրաքանչիւք

պարունակոց՝ ի պարզեւ զատադանդ մի . իսկ անցնիւր հետեւակի զատամն մնաս : Իսց յացումանէ հառոց զռումիկ վարձուցն , և ետ նոցա զբաւական պաշար մանապարհի : Իսկ որք կամէին մնալ առ նմա՝ ի նառ որութե՛ պարդեւ նոցա զերիս տաղանդս : Եշ պատճառ առատապէս բաշխելոց դօրաց զպարզ վես էր ո՛չ միացն բնական վեհանձնութիւն իւր , ոցիւ ոցն՝ զի զհետ պնդեալ ՚Իւարեհի՝ առացեալ էր զմեծ գումար դրամոց : «Բանզի՝ ի ոլահապանաց , որք ունի ին զմթերսն գանձուց՝ է առ զութհազար տաղանդս : Իսց յացումանէ բաշխեաց զօրացն զարդս և անօթս իրը երեքտասանն հազար տաղանդաց . իսկ զու ինչ նոքա կողոպտեալ յափշտակեալ էին՝ բաղկացուցանէը զառաւել մնծ կշիռ քան զացն :

Չուեալ անոի ՚ի Արկանու զօրօք հանդերձ՝ բանակեցաւ առ Հեկատոմպօլիս (Ապահան) քաղաքաւ . անդ՝ վասն զի երկիրն էր տրդաւանդ և առատարեր ամ՝ իրօք՝ որ ինչ կարեոր է առ պահպանութիւն մարդկան , դադար ետ զօրացն աւուրս ինչ . Ապս անցեալ զհարիւր յիսուն առ պարէ զ՝ եհաս մերձ առ վէմ մի բաշմար : Առ ու տամբ ոցսորիկ ապառաժ լերին էր ոյր մի՝ արժանաւոր բնակութե՛ ՚Իից , ուստի բղիսէ զետե Ասիբոյիտ : Այ լը երիս ասպարէ զս անցնալ ընթացու որհանու հարկանի զիիմի միոյ , որ ունի զձեւ ստեանց , և յիշ իւր ունի խոռուչ մնծ , ուր բաժանեալ յերկւառ՝ սցնուհետեւ անունի մնծաւ տ-

զաղակաւ . և 'ի հարկանելոյ դքարի ըստ ամբ փոխալ 'ի փրփուր՝ ընդ երեքհարիւր ասպարէց հոսէ ընդ երկրաւ . և ապա իրը նորոգ ելանէ զի ըստին :

Աստի Աղեքսանդր շարունակեալ զընթաց՝ եմուտ 'ի Արկանս . և հետզանդեցոյ ինքեան զամբազուրս՝ որ են 'ի նման մինչեւ 'ի ծովին կասպից, որ նայնպէս անուանի ծով Արիանաց : Ասեն՝ թէ յայսմիկ ծովու գտանին մածամեծ օձք և ձկունք յամբազուրս, որք կարի աննմանք են մերոցն : Անց ցալ ը Արկանս՝ եհաս 'ի գիւղս՝ որք անուանիր և իրոք են երջանիւր . Այս երկիր տռատութէ պարոց զերազանցէ զայլովք յոյժ . վասն զի ամբ որը իսուզուլց տոց զգինի տնուշահամ : Ի ծառոց արմաւենեաց չորացուցանեն ամ լը ամէ պաղատիսու՝ երը տան լտերս : Անացեալն 'ի գաշտի ցորեան անկանի յերկիր, և առանց հերկելոց աճեալ՝ բերէ զմեն բազմութիւն պարոց : Ի առ նոսա ծուռ ինչ նման կազնւոց՝ յորոց տերեւոց բղիսէ մեղք . զոր բնակիչք ժողովեալ՝ պատրաստեն ինքեանց ոռու քրազում՝ յոյժ . Ի նայնպէս առ նոսա թեւաւոր կենդանի մի Անթրիդոն անուն, փոքր ինչ մանր քան զմեղուս, ոչլ կարի արժանի նկատման : ԱԲանզի սա թռուցեալ 'ի գաշտու՝ զզանազան ծաղկունս ծծէ, և բունեալ 'ի գատարի վէճտ և 'ի ծառս՝ չկնէ զմեղը, որ քաղցրութէ չէ ինչ ընդ հաս քան զմեղը հասարակ .

(Յայնմ միջնէ մինչ Աղեքսանդր ըբքէր . 'ի  
Ալլ

Արկանս և 'ի շրջակայ տեղիս, բազումք 'ի զարագլխաց փախուցելոց ընդ 'Դարեհի անձնատուր եղեն նմա յօժարափոյթ։ Օորս ընկալեալ 'ի շնորհա սիրով՝ ստացաւ զմեծ փառս գորովադթ ու թեան, և նովաւ արար՝ զի Յօնք արք կարէ յոժ քաջք թուռվ իրը հազար հինգ հարիւր, որք 'ի պատերազմի օգնէին 'Դարեհի յանկարծ եղեն նմա անձնատուր։ Այս թողեալ նոցա զմեղս՝ նու մին իսկ վարձու էաւ զնոսա յիւր ծառացութիւն։

Եղա անցեալ ընդ ծովեզերեաց կողմանու Արկանաց յարձակեցաւ յիրիկը Արդացք անուանելոց որք գոլովի քաջք, և ոչ հայելով 'ի մեծութիւն զօրութեն Եղեքսանդրու ոչ առաքեցին առ նա դեսպանս, և ոչ զայլ յարգութիւնչնմա մատուցին։ այլ կալեալ զանձուկ մնւաս 'ի մեջ լերանց ութ հազար վառելովք յուսով սպասէին գալուտեան Արկեդանացւոց առ ինքեանս։ Այսն այսորիկ արքոցն անկեալ 'ի վերաց եթշնամեաց, և մատեալ ընդ նոսա 'ի մարտ զբաղումն 'ի նոցանէ կոտորեաց։ իսկ զայլս բանադասեաց փախչել 'ի փապարս լերանց։ Եւ մինչ նա հուրբ գաաէք զերզւանս զայնոսիկ՝ դէպ եղե, զի տապաստան եակք՝ որք գարմանէին զերիվսրս արքունի և ածէին, յացնմ միջոցի սակաւիկ ինչ հեռացան 'ի նմանէ, և բարբարոսք բարձին 'ի նոցանէ զպատուականսպոցն երիվարն, որ պարզեեալ էր նմա 'ի 'Դիմարատաց Արքնթացւոց և մինչև ցացն ժամանակ յամ Ասիական մըցմանս էր չը նմա։ Աս

մինչ

մինչը եր թամբեալ՝ ներէր նստիլ՝ ի վերաց իւր  
մի միայն ախոռապետին. իսկ յորժամ յարքենի  
դարդս լինէր հանդերձեալ, նմա եւ ո՛չ առցը  
Թոյլ այլ միայն Ազեքսանդրու՝ իջեալ առաջի  
հորա՝ ի գուճս, մինչ պէտք լինէին նմա աշտա-  
նակել. Յազագս այսոցիկ գերազանց ձրից սորտ  
առաւել ցաւեալ արքացի՝ հրամացեաց ամ ուրեք  
հատանել զանտառն. և 'ի ձեռն մունեակի հրա-  
մացեաց ազգ առնել՝ զի եթէ ո՛չ դարձուսցեն  
զերեվարն, տեսցեն զերկիլն իւրեանց ամացի կա-  
ցուցեալ ըստ ամի, և ղբնակիչսն խողիսպետլ.  
Այսոքիկ սպառնալիք ազգեցին վութով. վասն  
զի բարբարոսք երկուցեալ անտի՝ դարձուցին յետո  
զերեվարն. և ընդ նմին մատուցին և զպարդես  
մեծամեծս. և վիրքապէս՝ ի ձեռն յիստն դես-  
պանաց ինզերեցին՝ ի նմանէ անձանց զթողութի:  
Աասն որոյ և Ազեքսանդր զառաջաւօր աքսն՝ ի  
նոցանէ եառ ինքեան՝ ի պատանդ.

Վաս մինչ զառնացը՝ ի Արկանս՝ եկն առնա  
դշլոցն Ամազոնաց թազեսարա, որ տիրէր աշխար-  
հաց եզելոց՝ ի մէջ գետոց թաշաց և թաւրմո-  
գոնտեաց, ունէր զերբագոյն ինն գեզեցկութի  
և զզօրութի, և պատուեալ էր յօյժ յազգէն իւր-  
մէ վասն քաջութեն. Աա թողեալ զայլ զօրո՝ ի  
սահմանս Արկանաց՝ երեքհարիւր վասեալ Ամա-  
զոնօք (միասանեօք) եկն առ արքացն, Ազեքսանդր  
հիացեալ ընդ անակնաւնելի դալուստ և գեղեց-  
իութիւն Ամազոնաց՝ հարց՝ ի թաղիսարեաց

շառիթ եկաւորութեն նորա . և նա ասանց իրիք  
պատկառանց յայտնեաց՝ թէ եկեալ և վասն  
որդենութեն 'ի նմանէ . քանզի ասէ՝ ոչողէս մը-  
նութիւն և փառօս գործոց է-ըսց գերազանցէ Աշխա-  
տանշը զանեւս-մբէս յոյժ յոյժ . այսպէս և նու գելվց-  
ջութիւն և հոգիւան ցըեւս գերազանցէ սան զայլ ամ ի-  
նայս . սասան և յուսուալէ է՝ լէ ՚է ժնողաց յոյ-  
շանե էլցիւն ոչողէս , որս ցըեւս ի-ըեւանց զանցանիցին  
զահիւանացուուս . Ինկալեալ աբրայի զրան նորա սի-  
րով վերջապէս հաճեցաւ ընդ աղերս նորա . և  
կեցեալ ընդ նմա զաւուրս երեքտասան , և պաս-  
ուեալ զնա մեծամեծ պարգևօք՝ արձակեաց 'ի  
թագաւորութիւն իւր :

{ } եա այնորիկ համարելով՝ թէ արգեն իսկ  
ռաացեալ է զիսնդրելին իւր , և չունի այլեւ ա-  
խոյեւսն յիշխանութեն , մատնեցաւ 'ի փափկութիւն  
և 'ի շապէ կենցաղավարութիւն աբրայից Պար-  
սից . Վասն որոյ և նախ պահապանս աբրունեաց  
հրամացեաց ընտրել յԱսիացւոց . եմոյծ նոյնպէս  
և 'ի թիւ տիգաւոր վաշտից արս պատուականս ,  
յորս էր և Ավքսաթըրոս եղբայր 'Կարեհի . Ապա  
եւ ՚ի գլուխ իւր զպսակ թագաւորացն Պարսից ,  
և զգեցաւ յանձն իւր զսպիտակ հանդերձս , էած  
ընդ մէջ իւր զգօտի , և էարկ զիւլն զայլ ամ  
զարդս , զորս կրէին յաջորդք Աիւրոսի , բաց  
յանդրավարտեաց և 'ի զանկապանէն . Նոյնպէս  
և բարեկամաց բաշխեաց զհանդերձս ծիրանիս . և  
զհեծելազօրն հանդերձեաց ըստ տաբազու Պարսից :

Ապա բայտ օրինակի Դարեհի սկսաւ ածել ընդ իւլ  
ամ՝ ուրեք զբազմութիւն հարձից, որոց թիւ չէր  
ինչ ընդհատ քան զաւուրց տարւոց։ Առքա ա-  
մենեքին գեղեցիկ էին, ընտրեալ 'ի պատուա-  
կանաց 'ի բովանդակ Վախոց. որք յայտ գիշերէ  
դացին առ արքաց 'ի սենեակ նորա, զի ընդ ոք  
միանդամ 'ի նոցանէ հաջեսցի, զայն արգելցէ առ  
իւր յայն գիշեր։ Աակայն Վահեքանդը հազիւ եր-  
բէք 'ի կիր առնոցը զայսոսիկ սովորութիս, ոյլ  
ոլոհէք զառաջինսն ըստ մեծի մասին, զի մի՛ գըս-  
դուեսէ զՎակեղանացիս։ Վ. Յ. քանզի այսու ամբու-  
րազումք արտունչ ունէին զարքայէն, նմին իւրի  
և նա հանդարտեցուցանէք զնոսա պարզեց։

(Յայնմ ժամանակի լուր առեալ զՎատիքար-  
շանաց նախարարէն Դարեհի (զոր թուի թէ ապացե-  
րէն Պատմութիւն Վահեքանդը) ' Օ առիվարդան  
կոչէ) թէ կոտորեալ զզօրս նորա ' միաբանեալ է  
լը Բիսսեաց, և եղեւով են 'ի միտս յարուցանել  
'ի միասին զմարտ ընդդէմ Վակեղոնացւոց, կա-  
մեցաւ խաղալ 'ի վեւոց նշ։ Ժողովեալ և Սատի-  
քարզանաց զզօրս իւր ' գումարեաց 'ի Խորտական  
հռչակաւոր քաշաք կողմանցն այնոցին, որ 'ի բնուէ  
կարի ամուր էք։ Վ. Յ. իւրե Վահեքանդը երեւ-  
ցաւ ակն յանդիման, Սատիքարզան երկուցեալ  
'ի բաղմութենէ արքունական զօրաց, և 'ի քա-  
ջուէ Վակեղոնացւոց, որ փառաւորել էք ամու-  
րեք, երկու հազար հեծելովք քախեաւ առ Բիսս,  
կամելով համաձայնեցուցանել զնա, զի որքան  
հնար

հնար է՝ փութապէս եկեղեցէ ինքեան յօդնութիւն  
իսկ ացլոց հրամացեաց փախուստ տալ 'ի լեռոն  
ինչ, որոյ ելքն տմ ուրեք էին. դժուարին յոյժ,  
և յորում ծերպք և փասլարք դտանէին կարի յար-  
մարք ոցնոցիկ' որբ յընդարձակ վայրի միսիլ 'ի մարտ  
ընդ թշնամեաց ու կարէին. Եւ իրեւ նորա ա-  
պաստանեցան յայն բարձր, մայռալիք և 'ի բնուէ  
ամբացեալ լեռոն, արքայն 'ի գործ եղեալ զզօ-  
րութիւր, ըստ իւրում սովորութիւն բռնադա-  
սեաց զպաշարեալմն լինել անձնատուր. Այսոյաւ-  
տուրս երեսուն նուաճեալ լը ձեռամբ իւրով զամ-  
քաղաքս երկրին ոցնորիկ, ել 'ի Արկանայ, և  
զնացեալ 'ի մայրաքաղաքն Կարանդինացւոց՝ մեաց  
անդ զաւուրս ինչ 'ի հանգիստ զօրաց.

Այսում ժամանակի արուր Վզիքսանդը զայն-  
պիսի ինչ, որ ը նախիին տռարինութիւն և բա-  
րութիւն նորա էր կարի անհամեմատ. Ոմն 'ի մեր-  
ձաւորաց նորա Կախմբոս անուն զըսլարտեալ  
զարբայն սուտ վասն զուծոց իրիք, և գժտեալ  
ընդ նմա՝ խորհէր չարիս ընդդէմ նորա.

Աս յանկոց ՝ի միտքանութիւն եղեռնապոր-  
ծութեան իւրոց զ Արիոմակոս՝ զոր սիրէր յոյժ. և  
քանդի ստ էր մանուկ տիովլը, նմին իրի և զամ-  
ինչ ծանոց եղբօր իւրում Կերաղինեց. որ եր-  
կուցեալ թէ մի գուցէ զգացեալ ոք զայս յու-  
ռաջագոյն ազգեացէ արքային, կամեցաւ անձալը  
անձն յացտնել զայն. Ասոն որոյ և մտեալ 'ի  
խորան աւքայի հանդիտեցաւ Փիլովոց, և պատ-

մեալ նմա զսր ինչ լուեալ էր՝ յորդորէր զնա ան-  
յապաղ զգացուցանել արքափ զայնմանէ . Ա. Ա. Փիլովտ արդեօք՝ ի պատճառում հաղորդակցութե  
'ի դաւաձանութեն, թէ յարհամար հանաց՝ կաս-  
կածեալ զձշմարտութէ, ոչ փութացաւ հասու-  
ցանել զայն առ արքայ. ոյլ մուեալ 'ի խորան նո-  
րա, և խօսեալ ընդ նմա զբազում ինչ ոչինչ յի-  
շեաց զայնմանէ՝ զոր ասուց նմա Աերաղինոս: Ե-  
թեալ անտի ասէ յԱերաղինոս՝ թէ չետի ուժում ոչ  
որուի աւշտէլ ԱՀՀ առաջ դրա զայնմանէ . առիւն է ըս-  
դիւ անուր խօսեալ ընդ արքունի առաջինն, մանրա-  
մասնաբար առաջէ էւէց նյտ զամբենոյն՝ զայ լրաց առ  
'ի տէն:

Ա. Ա. իրբէ 'ի միւսում աւուր ևս արար ոչ  
ինչ. նմին իրի Աերաղինոս երկուցեալ՝ թէ կուցէ  
